



Համաձայնեցված է

ԼՂՀ Ֆինանսների և Էկոնոմկայի նախարար Ս. Թևոյանի փետրվարի 2015թ.

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«17» փետրվարի 2015թ.

N 181/Մ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N 188/Մ ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի օգոստոսի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատությունների նախադպրոցական խմբերի օրինակելի հաստիքացուցակը հաստատելու մասին» N 188/Մ հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնի վարիչ Ն. Հարությունյանին՝ սույն հրամանի մասին տեղեկացնել ուսումնական հաստատությունների տնօրեններին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2015 թվականի փետրվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:



Ս. ԱՍՐՅԱՆ